ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԳՐ. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ

ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ասորական միաբնակ եկեղեցին վերջնականապես ձևավորվեց VI դ., երբ Հակոբ Զանդալոսի կողմնակիցները 567 թ. առանձնացան Անտիոքի պատրիարք Պողոսի հետևորդներից («Հակոբիկյաններ» և «Պողոսյաններ»)[1]: Թե՛ քրիստոնեության տարածման վաղ շրջանում, թե՛ դրանից հետո մեր եկեղեցիները մշտապես համագործակցել են: Հատկապես Հակոբիկները լավ հասկացան, որ արտաքին և ներքին երկպառակությունների դեմ իրենք կարող են հաջող պայքար մղել միայն հայերի հետ համատեղ: Գր. Մագիստրոս Պահլավունին (990–1058) այն քաղաքական գործիչն էր, ով առավել լավ էր գիտակցում այս գործի կարևորությունը և մեծ հետաքրքրություն ցուցաբերում այդ հարցում: «Բազմակողմանի դիտելիքների տեր, աշխարհիկ և կրոնական գրականությանը հավասարապես քաջատեղյակ այդ հռչակավոր իշխանը»[2], հանրագիտակ մտածողը, իմաստասերը, պետական և ռազմական նշանավոր գործիչը հայ կյանքի վայրիվերումների կենտրոնում էր, անմիջական մասնակիցն ու հիմնական դերակատարներից մեկը[3]:

Պահլավունյաց իշխանը միջպետական, ազգամիջյան և միջեկեղեցական փոխհարաբերությունների հարցերում առաջնորդվում էր ազգային-քաղաքական շահագրգռություններով:

XI դ. բարդ էին հարաբերությունները բյուզանդացիների հետ՝ Անիի դեպքերի առնչությամբ, ասորիների հետ՝ մեր և նրանց ցրվածության ու դավանաբանական մանր-մունր տարաձայնությունների պատճառով, բայց երկուստեք կապերը շարունակվում էին[4]: Բյուզանդական կայսրերն ու պատրիարքները երբեք չդադարեցրին իրենց պայքարը հայ եկեղեցու դեմ՝ նրան իրականում ենթարկելու Պոլսի պատրիարքությանը՝ ծավալելով այդ ընթացքում սուր ու երկարատև դավանաբանական վեճեր[5], որոնք արտաքուստ կրում էին ծիսական խնդիրների շուրջ ծագած տարակարծությունների բնույթ: Այդ ժամանակ հայոց թագավորությունների թուլացումը և արագ անկումը բյուզանդացիների սագրանքով (Արծրունիներ, Բագրա-

---

[1] *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. հ. 8 (Ասորական աղբյուրներ. թարգմ., առաջ. և ծանոթ. Հ. Մելքոնյանի). Երևան, 1976, էջ 20, 342–343:*

[2] *Ս. Ա ր և շ ա տ յ ա ն. Գրիգոր Մագիստրոս.– Հայ մշակույթի նշանավոր գործիչներ. Երևան, 1976, էջ 202:*

[3] *Ս. Մ խ ի թ ա ր յ ա ն. Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը. Երևան, 2001, էջ 17–21:*

[4] *Տես Ե. ք. Պ ե տ ր ո ս յ ա ն, Հայ եկեղեցու պատմություն. հ. Ա, Հաղբատ, 1990, էջ 82–85:*

[5] *Ա. Ա լ ե ք ս ա ն յ ա ն. Հայ միջնադարյան նամակը (4–14-րդ դարեր). Երևան, 1997, էջ 68–72:*

տունիներ, Աբասյաններ) մեծապես թուլացրեց Հայոց հայրապետական Աթոռի դիրքերը ևս: 1047 թ. Պետրոս կաթողիկոսը (1019–1058) տարվեց Պոլիս՝ որպես պատվավոր պատանդ, մինչև որ 1051 թ. Ատոմ Արծրունու ազդու միջամտությամբ տեղափոխվեց բյուզանդահպատակ Սեբաստիա: Այդ ընթացքում պարզ դարձավ, որ հայոց հայրապետը և բարձր դասը դավանաբանական զիջումների չեն դնա: Իրավիճակը չփոխվեց նաև Խաչիկ Բ (1059–1065) կաթողիկոսի օրոք, որին Կոստանդին Դուկասը երեք տարի պահեց բանտում: Բյուզանդացիք ավանդաբար հայերին վերաբերվում էին որպես անվստահելի տարրի, իսկ հաճախ՝ ուղղակի որպես աղանդավորների[6]: Կայսրության վարած քաղաքականությունը հանգեցրեց նաև Հռոմի եկեղեցու անջատմանը 1054 թ. էլ ավելի խորացնելով քրիստոնեական եկեղեցիների հակամարտությունը[7]: Իրականում սկսվել էր քաղաքական ու եկեղեցական մի ճգնաժամ, որը հույները փորձում էին լուծել բռնի միջոցներով՝ դրանով հասնելով հակառակ արդյունքի:

XI դարի հայ-ասորական միջեկեղեցական հարաբերությունների վերաբերյալ քիչ վաստաթղթեր են պահպանվել: Դրանցից են Գր. Մագիստրոսի ասորիների կաթողիկոս Հովհան Է Դասրիգդային[8] (1001–1058) ուղղված ԿԷ և ԿԸ թղթերը: Դրանցում Պահլավունյաց իշխանը անդրադառնում է Թոնդրակ ավանի վրա իր կատարած հարձակման, աղանդավորներին տեղահան անելու, մի մասին դարձի բերելու և այլ վայրերում վերաբնակեցնելու մանրամասներին: Իշխանը դաժանություններ չի կատարել հասարակ մարդկանց, ծերերի, մանուկների և կանանց նկատմամբ: Աղանդավորները բողոքել են ասորիների կաթողիկոսին՝ ամենայն հավանականությամբ նրանից պաշտպանություն հայցելով: Իսկ վերջինս Գր. Մագիստրոսից ցանկացել է իմանալ բուն ճշմարտությունը, որպեսզի վճռի իր անելիքները: Պահլավունյաց իշխանը ԿԷ թուղթը վերնագրել է այսպես. «Պատասխանի թղթոյն կաթուղիկոսին Ասորւոց ի ժամանակին, յորժամ էր դուքս ի Վասպուրական և ի Տարօն. զկնի բառնալոյն զՄանիքեցիսն յաշխարհէն Յունաց, և ի Թոնգրակաց մնացեալսն նոցա կործանեալ ազգն. չոդան առ կաթուղիկոսն Ասորւոց ի քաղաքն Ամիթ, զի թերևս խաբէութեամբ հաւանեցուսցեն զնա»[9]: Այն հանդիսավոր-հարգական ոճ ունի: Աստվածաշնչյան բազում օրինակներով նա ցանկանում է ցույց տալ, որ իր արարքը Թոնդրակեցիների հանդեպ բխում է քրիստոնեության պահանջներից: Նրանք ծանր մեղք են գործել՝ շեղվելով ուղիղ դավանությունից, կործանելով ոչ միայն սեփական անձը, այլև ուրիշների: Նախախնամության ձեռքով կաթողիկոսն ակամա մասնակից է դարձել մոլորյալների դեմ մղվող սուրբ դործին «զի ճակատիցիս և դու զկնի այլոց հարցն սրբոց քում նախնեացն ընդդէմ աստուածամարտն որոց աղանդաւոր դիւթութեան կիւսոյ գաղտադող բաղբաղանաց այսպիսեաց»[10]: Ինչպես՝ այլ առի-

---

[6] Մ ի թ ա յ ե ա Բ ա ր թ ի կ յ ա ն. Հայ աղանդավորների հետքերը Հյուսիսային Հունաստանում.– ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1956, N3, էջ 76-80:

[7] Տե՛ս History of the Christian Church, v. 4, Massachussetts , p. 301–320.

[8] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Թղթերը (այսուհետև՝ Թղթեր). Ալեքսանդրապոլ, 1910, էջ 283:

[9] Նույն տեղում, էջ 148:

[10] Նույն տեղում, էջ 152:

թով, այնպես էլ այստեղ աղանդավորները մեղադրվել են կախարդության մեջ, ինչը մահացու մեղք էր համարվում, և այդ դեպքում ամենախիստ պատիժներն էին սահմանվում նրանց հանդեպ: Որպես հաստատումն իր ասածի, Գր. Մագիստրոսը կոչ է անում, որ Ս. Հայրը կարդա երանելի վարդապետ Անանիայի (Նարեկացու) գրվածքը[11], որպեսզի պարզ տեսնի, թե ինչպիսի «անբարի բարեձևությամբ» և «խորամանկ խաբեությամբ» է ծագել այն: Մի՞թե իրենց գործը չէ նրանց ճիշտ ճանաչարհի բերելը հակառակ աղանդավորների պնդումների: Նա խոսում է աղանդի սկզբունքների ու յուրահատկությունների, աղանդապետերի հայացքների ու գործունեության մասին[12]: Իրեն հաջողվել է երկու աղանդապետերի՝ Պողիկարպոսի և Նիկանորայի օգնությամբ բազմաթիվ թղթեր ու գրություններ ձեռք բերել հերձվածի վերաբերյալ: Դա կարևոր հիշատակություն է երբևէ այդօրինակ գրականության գոյության մասին[13]: Ինչպես ինքն է դարձի բերել մոլորյալներին, այնպես էլ թող կաթողիկոսը վարվի. «...եկեալ ընկալցին զմկրտութիւն, խոստովանեալ զյանցանս իւրեանց. ապա եթէ ոչ, մի՛ ողորմեցիս նոցա և մի՛ միաբանեսցիս և մի՛ արասցես տեսութեան»[14]: Իր հարկի տակ չընդունելով և հալածելով աղանդավորներին՝ հայ և ասորի եկեղեցիները պիտի կատարեն հաջորդ կարևոր քայլը՝ կրկին սերտացնեն հարաբերությունները: Այդպիսի մի փորձ եղել էր Հովհան Օձնեցու(717–718) օրոք, և հաջորդը կատարվում էր XI դ. կեսերին: Բուն իրադարձությունները կապված են 1051 թ. և նրան հաջորդած մի քանի տարիների հետ, ինչպես նշում է Կ. Կոստանյանցը[15], և ոչ թե 1058–1059 թթ. հետ, ինչպես ենթադրում է Ե. Տեր-Մինասյանը[16]: Քույր եկեղեցիների մերձեցման և համագործակցության հարցն առաջադրելիս Մագիստրոսը հիշում է տեր Զաքարիայի օրերը (855–876), երբ անհրաժեշտ էր վերամիավորվել, և երկու եկեղեցիները սկսեցին համագործակցել[17]: Մի բան ակնհայտ է. մերձեցումը տեղի է ունեցել այն դաբերում, երբ կայսրությունը հալածանքներ է սկսել կա՛մ հայ, կա՛մ ասորի եկեղեցիների դեմ թե՛ առանձին-առանձին, թե՛ միասնաբար: Ավանդական կապերին վերադառնալու պահանջը երկուստեք անհրաժեշտ էր, և Մագիստրոսը չեշտում է դա ու նշում, որ աթոռակից եկեղեցիները և քահանայապետերը «առ մեզ և ի մերում հայրապետանոցի քո սրբազանութիւնդ որպէս սրբոյն Կիւրեղի և երիցս երանելեաց հարցն, որ յԵգիպտոսն են, այնպէս համարիմք աթոռակից, պատարագակից մանաւանդ եթէ քահանայակից, ձեռնադրինք և ձեռ-

---

[11] Ա. Ն ա ր ե կ ա ց ի. Գիր խոստովանութեան. Վաղարշապատ, 1892:

[12] Ս. Մ խ ի թ ա ր յ ա ն. Գր. Մագիստրոսի կյանքը..., էջ 32–40:

[13] Ա. Ե ր ի ց յ ա ն.– «Փորձ», Թիֆլիս, 1880, N10, էջ 80–115:

[14] Թղթեր, էջ 163:

[15] Նույն տեղում , էջ ԽԶ–ԽԷ, 283:

[16] Ե. Տ ե ր - Մ ի ն ա ս յ ա ն. Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ. Էջմիածին, 1908, էջ 238–239:

[17] Տեր Զաքարիա Զագեցու (855–876) օրոք սրվեցին հայ-բյուզանդական միջեկեղեցական հարաբերությունները, քանզի Փոտ պատրիարքը (857–867, 877–886) տեր Զաքարիային ուղղված նամակներով պահանջում էր ղիջումներ, որոնք բնականաբար չարվեցին: Այդ ժամանակ Հայաստանում էր Նանա ասորին, որը նույնպես ծանոթացավ Փոտի թղթերին և մասնակցեց Շիրակավանի 862 թ. ժողովին: Այստեղ կայացավ մի նոր միություն երկու հայ և ասորի եկեղեցիների միջև, որը պիտի հակազդեր բյուզանդական ճնշումներին: Հենց այդ մասին է խոսում Գր. Մագիստրոսը (տե՛ս Մ. Զ ա մ չ ե ա ն ց. Պատմութիւն հայոց. հ. Բ, Երևան,1984, էջ 685–689):

նադրենք, և զոր ինչ բոլոր քահանայագործութեան հետևին»[18]: Որոշ չփոթ էլ առաջացել է հայրենի ավանդները չպահպանելու պատճառով, ուստի կուզենար, որ համադրելով իրենց ծեսերը ճշդրտումներ կատարեին: Այդ մասին կխոսեն, երբ շուտով ինքը կհանդիպի Սրբազանին: Երևում է, որ միջեկեղեցական մերձեցման խնդիրներում Գր. Մագիստրոսը որոշ լիազորություններ է ստացել տեր Պետրոսից, այլապես ինքնագործունեությամբ չէր զբաղվի: Ի դեպ, հիշվում է նաև այն մասին, որ նմանատիպ մի թուղթ-բողոքագիր էլ աղանդավորները հղել են Պետրոս կաթողիկոսին: Մյուս կողմից՝ բյուզանդական կուսակալը, որ երեկվա Անիի սպարապետական տան ներկայացուցիչն է, ձգտում է գտնել նոր նախադրյալներ հայոց կորսված պետականության վերականգնման համար: Բացառված չէ, որ հայոց կաթողիկոս Պետրոսի բռնի մահվան դեպքում հայերը նոր կաթողիկոսի ձեռնադրման փորձ կատարեին ասորի հոգևոր առաջնորդի միջոցով, ինչպես հայերն էին նման վտանգի դեպքում ձեռնադրում ասորի կաթողիկոսներին՝ սատարելով ասորի ժողովրդին[19]:

Հեռատես Գր. Մագիսարոսը չեշտում է, որ հայ եկեղեցին հավատարիմ է Պողոս և Պետրոս առաքյալների՝ արևմտյան աշխարհում և Հռոմում հաստատված սկզբունքներին, բայց այդ ամենը վերցված ճշմարիտ վարդապետությամբ և ոչ հետագա ազավաղումներով, ինչի մասին գրում է նաև ասորի հեղինակ Բար-Շամովեն: Վկայակոչելով տնօրինական (սուրբ) վայրերը և սուրբ հայրերի դրվածքները՝ հաստատում է իր հավատարմությունը դրանց՝ օգտագործելով երգման բանաձև: Իր նամակում ասորիների կաթողիկոսը ցավով խոսել է իրենց ազգի փոքրաթիվ լինելու մասին: Իշխանն այդ առիթով նկատում է, որ դրա պատճառը «Ի տկարութենէ աւանդութիւն ամուսնութեան սակս նուազութեան ազգիդ ձեր ի մէջ այլազգեաց, զոր հնարն է մաքրել»[20]: Խառն ամուսնությունների պատճառով փոքրացել է ասորի ժողովուրդը, բայց վիճակը կարելի է շտկել:

ԿԸ թուղթն ուղղված է թոնդրակեցիներին: Այն հանդիմանանքի խոսք է աղանդավորների մասին, որոնք համառորեն չեն հրաժարվել իրենց մոլորություններից: Գ. Տեր-Մկրտչյանը նկատում է, որ «հայկական մտածողության միակ արտադրությունը, թեպետ աղանդավոր և հակաուղղափառական մտածողություն, որը գուրս եկավ Հայաստանի սահմաններից, տարածվելով հեռուն՝ Փոքր Ասիա, Միջագետք, Բալկանյան թերակղզի.... Թոնդրակեցիների աղանդն էր»[21]: Իսկապես, X–XIV դդ. մտավոր առաջընթացը և Վերածնական միտքը մեծապես կապված էր այս՝ որոշ իմաստով աշխարհիկ մտածողության հետ[22]:

Իր թղթում Գրիգոր մեծ իշխանը հանդիմանում է թոնդրակեցիներին, որ խաբել ու իրենց չարագործություններին մասնակից են դարձրել Սուրբ կաթողիկոսին. «Բայց եթէ զիարգ համարձակեցաք առ սուրբդ և երանելիդ

---

[18] Թղթեր, էջ 163:

[19] 1264 թ. Սսի Մայր եկեղեցում ձեռնադրվում է ասորիների վերջին Հակորիկ կաթողիկոսը՝ Հովհան Բար-Մաադանին (1252–1263) (տե՛ս Ե. Տ ե ր - Մ ի ն ա ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 268–288):

[20] Թղթեր, էջ 164:

[21] Գ. Տ ե ր - Մ կ ր տ չ յ ա ն. Հայադիտական ուսումնասիրություններ. հ. Ա, Երևան, 1979, էջ219:

[22] Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր. հ. Դ, Երևան,1970, էջ 17–32:

մատչել քահանայապետ, զի և զդա հաւանեցուցէք խաբել. զի յեղբարց և յաթոռակցաց որոշեսցի կամ անգոսնեսցի»[23]: Թող ծանր վիճակի մեջ չգցեն նրան, այլ իրենք ուղղվեն հեռանալով կուրաչավիղ ճանապարհներից: Զգիտակցելով իրենց կործանումը նրանք կործանման պատճառ են դառնում ուրիշների համար: Եթե ոչ, թող հեռանան ասպարեզից՝ որպես կորստյան զավակներ:

Եկեղեցիների մերձեցման խնդիրը XI դ. կեսերին կարևորվում էր նաև արտաքին վտանգի դեմ դիմակայելու անհրաժեշտությամբ: Դա մի կողմից աղանդավորների դեմ համախմբված պայքարով էր պայմանավորված, մյուս կողմից՝ կայսրության հարուցած հալածանքներով: Արդյունքում ձևավորվում էր մի ընդդիմադիր ուժ, որը պիտի կարողանար դիմակայել գալիք փորձություններին[24]:

Հայ-ասորական եկեղեցական կապերի ամրապնդման առիթով ասենք նաև, որ Գր. Մագիստրոսը թարգմանություններ է կատարել ասորերենից: Շարունակելով մաշտոցյան ավանդները՝ նա գրում է. «...եւ եթէ տակաւին կամեսցի Տէր երկարանալ մեզ ի կենցաղումս, բազում հոդս յանձին կալեալ զմնացեալսն բոլոր Յունաց և Ասորւոց թարգմանել ոչ դանդաղեցայց»[25]: Բազմազբաղ իմաստասերը չէր կարող չչտասլել: Մերության օրոք անհրաժեշտ էր ավարտել հունարեն և ասորերեն երկերից արվող թարգմանությունները: Ցավոք, նա ոչինչ չի հայտնում հենց ասորերեն թարգմանությունների ո՛չ հեղինակների, ո՛չ նրանց աշխատությունների մասին: Մի բան, սակայն, պարզ է. դրանք եղել են նշանավոր հայրերի կարևորագույն աշխատություններ, որոնք գուցե մեր օրերն են հասել, բայց առանց թարգմանչի անվան հիշատակության: Իսկ Մագիստրոսի ջանքերը հայ կյանքը բարելավելու, հայ եկեղեցին ճգնաժամային դրությունից դուրս բերելու համար իզուր չեն անցել: Նրա սերունդները՝ Պահլավունիները, հետագայում դարձել են կաթողիկոսներ՝ շարունակելով իրենց հայրերի ավանդները:

АРМЯНО-АССИРИЙСКИЕ МЕЖЦЕРКОВНЫЕ ОТНОШЕНИЯ ПО ГР. МАГИСТРУ

САРГИС МІХИТАРЯН

Р е з ю м е

Армяно-ассирийские межцерковные связи берут начало в период раннего распространения христианства. С 567 г., когда Акоп (Яков) Занзалос основал ассирийскую монофизитскую церковь, эти взаимосвязи получают новое значе-

---

[23] Թղթեր, էջ 166:

[24] Գ ր. վ. Մ ա գ ա ս ա ր յ ա ն. Ընտրյալ Աստուծո Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը. Երևան,1995, էջ 70–76. նաև Ե. ք. Պ ե տ ր ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 90:

[25] Թղթեր, էջ 66:

ние. В XI в. наблюдается новый этап в развитии армяно-ассирийских отношений, которые были обусловлены. 1. борьбой против ереси, распространяемой тондракидами, и вытеснением их из жизни армянских и ассирийских общин 2. борьбой против агрессии византийской церкви, организованной Византией. В своем послании предводителям еретиков и в послании ассирийскому патриарху Григор Магистр (Магистрос) пишет об истоках ереси, о географических границах ее распространения и идеологической направленности, он подчеркивает антихристианскую сущность ереси и ее опасность для общественной жизни.

THE RELATIONS BETWEEN ARMENIAN-ASSYRIAN CHURCHES ACCORDING TO GR. MAGISTER

SARGIS MKHITARYAN

S u m m a r y

The relations between Armenian-Assyrian churches begin in early times of spreading the Christianity. Since 567 those realations have got a new meaning, when Hakop Zanzalos founded monophysite Assyrian church. A new period of realations between the churches began in the 11th century, which was connected with: a/ the fight against the Tondrac's sects to make the sects leave Armenian and Assyrian inhabitations, b/ the fight against the attacks of the church of the Byzantium which had been stately organized. In his letters to the leader of Assyrian churches and the leaders of the sect famous thinker and army commander Grigor Magister speaks of the sect, its geographical regions and ideological ways too, noticing its antiChristian meaning and its danger for the public life.